

«սուրբ սկտեղը» բացատրութենէն (Եղիշ. 173), որ արտաքին մաքրութենէն աւելի՝ նիւթին որակը ցոյց կու տայ: Ադոնց ազնուութեան սահմանը մինչեւ արծաթ իմանալի է մետաղներուն մէջ. վասն զի ոսկեղէնը՝ թագաւորին եւ կամ անորմէ առանձնապէս պատուեալ իշխանաց միայն սեպհական էին հին ժամանակները: Եւ իրաւամբ կը յիշէ Մանդակունին «զբաժակն ոսկի՝ զոր քաղաւորի իսկ մատուցանեմք ի սպաս եւ ի սեղան» (205), եւ ոչ այլոց: Նաեւ Մանուէլ Մամիկոնեան՝ իբրեւ խնամակալ Հայոց գահուն՝ Պարսից արքայէն ընդունեցաւ «թագաւորական» պատիւներ, որոց մէջ էր եւ «ոսկի սպաս տաճարին» (Փաւս. 246): Արշակ Բ իրաւունք կու տայ իւր երկրորդին Արգամայ՝ եւ Սմբատայ իւր բարերարին՝ «ոսկի» կամ «ոսկեղէն» սպասներ զորձածելու (Խոր. 124): Եւ Խոսրով արքայ Պարսից՝ Սմբատ մարզպանին «զամենայն անօթս մատուակացն առաքէ նմա ոսկի» (Սեբ. 102): Նիւթի այս խտրութիւնն ուրեմն օրինական եւ յայտնի է մեր նախնեաց մէջ, եւ Մանուէլի ու Սմբատայ օրինակէն հետեւցնելով՝ նաեւ Պարսից, ինչպէս եւ Ասորոց ալ (Ա. Մակ. ԺԱ, 58). ուր ընդ հակառակն Բիւզանդացի ազնուականաց «ամենայն սպասքն» կը